ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/206

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.08.2021թ. թիվ 26/26-1/12358-2021 գրությամբ «Մաժէվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 27.07.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/3734-2021 գրության հիման վրա, 03.08.2021թ. թիվ 26/26-1/12358-2021 գրությամբ նախաձեռնել է «Մաժէվ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Մաժէվ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մաժէվ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ Պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ՝ Ն. Յոլչյանը գրությամբ դիմել է ՀՀ Ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ. Բրուտյանին՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 03.08.2021թ. թիվ 26/26-1/12358-2021 գրությամբ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Լ. Օհանյանը նախաձեռնված ընթացակարգը ընդունել է վարույթ և ընթացակարգին տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021-/204 ծածկագիրը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ստորև ներկայացնում ենք «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև Ընկերություն) դիրքորոշումը և գտնում ենք, որ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով 03.08.2021թ. -ին նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021-/204 ծածկագրով ընթացակարգը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

1. Գործի հակիրճ նկարագրությունը և գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1.1. ՀՀ Պաշտպանության նախարարության կարիքների համար, գնանշման հարցման եղանակով, որն իրականացվել է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www. armeps.am) էլեկտրոնային համակարգի միջոցով, «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն մասնակցելով «ներկանյութերի, ռետինափողրակների, վառելիքի լիցքավորիչների, քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքերի» ձեռք բերման «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31»

ծածկագրով գնման ընթացակարգին՝ մասնակցության հայտ է ներկայացրել 2-րդ, 3-րդ չափաբաժիններին:

3-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով մասնակցության հայտեր են ներկայացրել հինգ ընկերություն, այդ թվում և «ՕԼԷԴ» ՍՊԸ-ն:

3-րդ չափաբաժնի համար «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն առաջարկել է 6 552 000 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, իսկ հաջորդ տեղ զբաղեցրած «ՕԼԷԴ» ՍՊԸ-ն՝ 9 570 000 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Երկու ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկների տարբերությունը կազմում է 3 018 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն տառացիորեն ներկայացրել է այն նույն բնությգիրը, որը նախատեսված է եղել հրավերով, նույնը ներկայացրել են նաև 3-րդ չափաբաժնին հայտ ներկայացրած մյուս մասնակիցները, այդ թվում նաև «ՕԼԷԴ» ՍՊԸ-ն:

Սակայն ընթացակարգի հրավերի համաձայն 3-րդ չափաբաժնի գնման առարկայի անվանումը նշված է եղել՝ «Վառելիքի լիցքավորիչներ/էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս», իսկ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի անվանումը սյունակում նշվել է «Վառելիքի էլ. լցակայան», ինչը որևէ կերպ չի հակասում և չի տարբերվում հրավերով պահանջվող ապրանքի բնութագրին, ինչպես նաև դրա նպատակային օգտագործման բուն էությանը և տրամաբանությանը:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ «Վառելիքի լիցքավորիչներ/էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս»-ն գնման առարկայի անվանումն է, իսկ «Վառելիքի էլ. լցակայան»-ը՝ առաջարկվող ապրանքի անվանումը:

Հատկանշական է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը հնարավորություն է ընձեռնում անհրաժեշտության դեպքում նշել տվյալ ապրանքի ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողը: Սակայն մրցույթի հրավերով այն նախատեսված չի եղել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.06.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ որոշում է կայացրել Կարգի 41-րդ կետի համաձայն կասեցնել նիստը և ծանուցել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ- ին շտկել ապրանքների անվանումներում («Վառելիքի էլ. լցակայան», և «Վառելիքի լիցքավորիչներ/ էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս») առկա տարբերությունը:

Ի պատասխան դրան՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է համապատասխան շտկումը:

Շտկման արդյունքում «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն նշել է ապրանքի անվանումը՝ «Վառելիքի լիցքավորիչներ/էլ, լցակայան ՍԵՎԵՐ 111-50 ՄՍ» կցելով բացատրական նամակ առ այն, որ նշված ապրանքը համապատասխանում է Ընթացակարգի հրավերի պահանջներին:

Ցանկանում ենք նաև նշել, որ գնահատող հանձնաժողովը ընդհանրապես չպետք է շտկում պահանջեր, քանի որ հրավերով չի սահմանվել, չի պահանջվել, որ գնման հայտով մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապրանքային նշանը, մակնիշը, արտադրող կազմակերպության վերաբերյալ տեղեկատվությունը:

Հարկ է նշել, որ ՆԱՌԱ 27Մ1Ս (ТРК НАРА 27М1С) մոդելի լիցքավորման կայանը 1990 ական թվականներից արտադրվել է «ՆԱՌԱ» ՓԲԸ կողմից, որը 2015թ. սննկացել և լուծարվել է: Նույն «ՆԱՌԱ» ՓԲԸ-ի նախկին փոխտնօրենի կողմից հիմնադրվել է նոր կազմակերպություն՝ «ԱԶԱ Սպեցսերվիս» ՍՊԸ (ООО «АЗС СПЕДСЕРВИС») անվամբ, որը սկսել է արտադրել նույն «ՆԱՌԱ 27Մ1Ս» մոդելի լիցքավորման կայանը այլ անվանմամբ՝ «ՍԵՎԵՐ 111-50 ՄՍ»: Վերջինս ունի համապատասխանության սերտիֆիկատ «О безопасности оборудования для работы во взрывоопасных средах (ТР ТС 012/2011) և որպես չափման միջոց պետական գրանցման վկայական՝ «Свидетельство об утверждении типа средств измерений»:

2019թ. ապրիլի 17-ին մեկ այլ «ԷԴԱՆ Ինժինիրինգ» ՍՊԸ-ն (ООО «ЭДАН Инжиниринг») հայտ է ներկայացրել, որով 2020թ. սեպտեմբերի 09-ին գրանցվել է «ՆԱՌԱ» ապրանքանիշը՝ որպես այդ ընկերության մտավոր սեփականություն:

Հատկանշական է, որ «ԷԴԱՆ Ինժինիրինգ» ՍՊԸ-ի կողմից արտադրվող «ՆԱՌԱ 27Մ1Ս» մոդելի լիցքավորման կայանը չունի համապատասխանության սերտիֆիկատ և որպես չափման միջոց չունի պետական գրանցման վկայական, մինչդեռ դա օրենքի պահանջ է:

Նշված փաստերը մանրամասն ներկայացվել են նաև ՀՀ ՊՆ պատասխանատու ստորաբաժանմանը (ՀՀ ԶՈՒ ԹՎ և Վ Ծառայություն) և վերջիններիս կողմից 08.06.2021թ. տրամադրված մասնագիտական եզրակացությամբ հաստատվել է, որ «ՄԱԺԷՎ» ՄՊԸ-ի կողմից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքն ամբողջությամբ համապատասխանում է հրավերի պահանջներին, և գնահատող հանձնաժողովը որոշել է «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից և կնքել պայմանագիր:

1.2. «ՕԼԷԴ» ՍՊԸ-ն 11.06.2021թ. ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31 ծածկագրող գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումների դեմ ներկայացրել է բողոք, որը ստացել է ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 ծածկագիրը:

«ՕԼԷԴ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով խնդրել է վերացնել ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31 ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի 10.06.2021թ.-ի թիվ 6 արձանագրությամբ կայացրած որոշումը, ինչպես նաև պայմանագիր կնքելու որոշումը և ընտրված մասնակից ճանաչել հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին՝ այն է «ՕԼԷԴ» ՍՊԸ-ին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի կողմից «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի կողմից 11.06.2021թ. ներկայացրած «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» գնման ընթացակարգի վերաբերյալ բողոքն ընդունվել է վարույթ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանը թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշմամբ բավարարել է «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի 11.06.2021թ.-ի բողոքը և չեղյալ է համարել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի ընդունած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշումը «ՄԱԺԷՎ» կողմից բողոքարկվել է դատական կարգով: Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԵԴ/32019/02/21 որոշմանբ ընդունել է վարույթ:

Գտնում ենք, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի 12.07.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշումն իրավաչափ չէ, այն ընդունվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության սխալ մեկնաբանման, ինչպես նաև գործի հիմքերի քննության բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության սկզբունքների խախտման արդյունքում, որի մասին մանրամասն ներկայացվել է դատարան ներկայացված հայցադիմումում:

2. Դիրքորոշման իրավական հիմքերը և հիմնավորումները.

2.1. Սույն կետում ներկայացվում է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ անձ Գ. Ներսիսյանի 12.07.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշման ոչ իրավաչափ լինելու հիմնավորումները և պատճառաբանությունը:

Այսպես, գտնում ենք ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի 12.07.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշումն ընդունվել է Գնումների մասին ՀՀ օրենսդրության սխալ մեկնաբանման, ինչպես նաև գործի հիմքերի քննության

բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության սկզբունքների խախտման արդյունքում.

ա) ցանկանում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել այն կարևորագույն փաստի վրա, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 12.07.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշմամբ ընդհանրապես չի ուսումնասիրվել և չի գնահատվել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից 22.06.2021թ. թիվ 022/027 գրությամբ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 բողոքի շրջանակներում ներկայացված դիրքորոշումը:

Մասնավորապես, որոշման 5-րդ՝ «ՀՀ գնումների հետ կապված քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը» բաժնում բողոքներ քննող անձը ընդհանրապես քննարկման առարկա չի դարձրել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի ներկայացրած դիրքորոշումը, իսկ դիրքորոշմամբ ներկայացված փաստարկները և ապացույցները չեն ուսումնասիրվել և գնահատվել:

Չի գնահատվել ՀՀ ՊՆ կողմից ներկայացրած ՀՀ ՊՆ պատասխանատու ստորաբաժանման (ՀՀ ԶՈՒ ԹՎ և Վ Ծառայություն) 08.06.2021թ. մասնագիտական եզրակացությունը:

Այսինքն, ստացվել է մի իրավիճակ, որտեղ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի ներկայացված համապատասխան գրությամբ և ՀՀ ԶՈՒ ԹՎ և Վ Ծառայության 08.06.2021թ. տրված մասնագիտական եզրակացությամբ մանրամասն շարադրված են գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստարկներ և ապացույցներ, սակայն դրանք ընդհանրապես չեն ուսումնասիրվել 12.07.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշում կայացնելիս:

Վերոհիշյալը իր հերթին հանգեցրել է բողոքներ քննող անձի կողմից բողոքի հիմքերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության սկզբունքների խախտմանը, և որպես հետևանք՝ որոշման ոչ հիմնավորված և ոչ իրավաչափ լինելուն:

Մինչդեռ, «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանի՝

- 18-րդ կետի համաձայն. «Բողոքի քննության ընթացքում կայացվող որոշումները բաղկացած են ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Անձի կողմից բողոքի քննության ընթացքում կայացված որոշումները պետք է լինեն օրինական, հիմնավորված և պատճառաբանված:... Ընդ որում՝ որոշումը՝

1) օրինական է, եթե այն կայացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ.

2) հիմնավորված է, եթե դրանում արտացոլված են այն կայացնելու համար անհրաժեշտ և բավարար փաստական ու իրավական հիմքերը.

3) պատճառաբանված է, եթե դրանում արտացոլված են ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ Անձի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները»:

Նույն հրամանի 19-րդ կետի համաձայն. «Անձը պարտավոր է որոշման մեջ հիմնավորված և պատճառաբանված ձևով անդրադառնալ բողոքարկման գործընթացի կողմերի՝ մինչև բողոքը բավարարելու կամ մերժելու մասին որոշում կայացնելու նպատակով հրավիրվող նիստի անցկացման մասին հայտարարությունը տեղեկագրում հաջորդող օրը, ներառյալ՝ ներկայացրած փաստաթղթերում, գրավոր դիրքորոշումներում, ներկայացված ապացույցներում բերված բոլոր փաստարկներին, տեղեկագրում և/կամ էլեկտրոնային գնումների համակարգում հրապարակված նյութերին»:

Հրամանի 20-րդ կետի համաձայն. «Բողոքը բավարարելու կամ մերժելու մասին կայացվող որոշման՝

1) ներածական մասում նշվում են բողոքի ծածկագիրը, որոշումը կայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը, բողոքը քննած Անձի անունը և ազգանունը, բողոքի առարկան, բողոք ներկայացրած անձի, պատվիրատուի և ներգրավված կողմերի անվանումը, նրանց ներկայացուցչի և/կամ լիազորված անձի անվանումը (անունը, ազգանունը), ներկայացուցիչների և/կամ լիազորված անձանց դեպքում նաև որպես ներկայացուցիչ և/կամ լիազորված անձ հանդես գալու համար հիմք հանդիսացած փաստաթղթե րի տվյալները, բողոքը ստանալու և վարույթ ընդունելու տարին և ամսաթիվը.

2) նկարագրական մասում նշվում են բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը, առարկան, բողոքի փաստական և իրավական հիմքերը, բողոքը ներկայացրած անձի պահանջը, բողոքարկման գործընթացի կողմերի ներկայացրած փաստաթղթերը, գրավոր դիրքորոշումները, ապացույցները, փորձաքննություն նշանակված լինելու դեպքում փորձագետի եզրակացությունը, այլ անհրաժեշտ տեղեկություններ.

3) պատճառաբանական մասում նշվում են բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Անձի եզրահանգումը՝ բողոքով ներկայացված պահանջների, կողմերի ներկայացրած փաստաթղթերի, գրավոր դիրքորոշումների, ապացույցների հիմնավորվածության վերաբերյալ.

4) եզրափակիչ մասը պարունակում է բողոքով ներկայացված յուրաքանչյուր պահանջը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու մասին Անձի որոշումը, ինչպես նաև նշում այն մասին, որ որոշումն իրավապարտադիր է, ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրը և կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից»:

Վերոնշյալ իրավանորմերի լույսի ներքո՝ գտնում ենք, բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից 12.07.2021թ. ընդունված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշումը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 600-Ն հրամանով ամրագրված վավերապայմաններին, այն չի ներառում և չի արտացոլում «ՄԱԺԷՎ» ՄՊԸ-ի կողմից բողոքներ քննող անձին ներկայացված փաստական և հիմքերը, այդ հիմքերի և ներկայացված ապացույցների գնահատման փաստերի և իրավունքի նորմի կիրառման գործընթացի կապակցությամբ անձի դատողությունների վերաբերյալ եզրահանգումները:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ դատարանի կողմից միևնույն փաստական հանգամանքներով նույն հիմքով թիվ ԵԴ/17769/02/19 գործով 15.05.2020թ. կայացրած օրինական ուժի մեջ մտած վճռով բողոքներ քննող անձի կողմից կայացրած որոշումը վերացվել է (մասնավորապես՝ արձանագրվել է, որ վիճարկվող որոշումը չի ներառել և չի արտացոլել տվյալ ընկերության կողմից բողոքներ քննող անձին ներկայացված փաստական հիմքերը, այդ հիմքերի և ներկայացված ապացույցների գնահատման փաստերի հաստատման և իրավունքի նորմի կիրառման գործընթացի կապակցությամբ անձի դատողությունների վերաբերյալ եզրահանգումները):

բ) ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաներ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի,

ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մանակիցներին և պատվիրատուին ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահաովում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեղնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Ինչպես արդեն նշել ենք, «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը՝ 3-րդ չափաբաժնի մասով, Ընթացակարգի հրավերի պահանջներին անբավարար գնահատելը հանդիսանում է

ձևական վարչարարություն՝ հետևյալ հիմնավորմամբ. «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը՝ 3-րդ չափաբաժնի մասով ներկայացրած ապրանքի ամբողջ տեխնիկական բնութագրերը համապատասխանել են հրավերի պահանջներին:

Մասնավորապես, նշվել են Հրավերով նշված ապրանքի բոլոր տեխնիկական բնութագրերը, սակայն ապրանքի անվանման դիմաց Հրավերով նախատեսված «Վառելիքի լիցքավորիչներ/ էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս»-ի փոխարեն նշվել է «Վառելիք էլ. լցակայան»:

Շտկման արդյունքում «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն նշել է ապրանքի անվանումը՝ «Վառելիքի լիցքավորիչներ/էլ. լցակայան ՍԵՎԵՐ 111-50 ՄՍ»՝ կցելով բացատրական նամակ առ այն, որ նշված ապրանքը համարժեք է Ընթացակարգի հրավերի պահանջներին:

Նշված ապրանքի համարժեքության փաստը ուսումնասիրվել է նաև ՀՀ ՊՆ պատասխանատու ստորաբաժանման (ՀՀ ԶՈՒ ԹՎ և Վ Ծառայություն) կողմից և 08.06.2021թ. տրամադրված մասնագիտական եզրակացությամբ հաստատվել է, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքը ամբողջությամբ համապատասխանում է հրավերի պահանջներին:

Մեր կարծիքով, պատվիրատուն, ըստ էության հստակ սահմանել է գնման առարկայի անվանումը՝ «վառելիքի լիցքավորիչներ» (ինչը և հաստատված է CPV կոդով), ինչպես նաև տեխնիկական բնութագիրը, որին ամբողջությամբ համապատասխանում է «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ով տրված բնութագիրը, միաժամանակ գնման առարկայի անվանմանն ի հավելումն փակագծերում, որպես հուշող կամ օժանդակող տեղեկատվություն, նշվել է «ՆԱՌԱ 27-Մ1Ս»:

Միևնույն ժամանակ հավաստում ենք, որ ապրանքի անվանումը, նկարագիրը չի տարբերվում հրավերով պահանջվող ապրանքի բնութագրից, ինչպես նաև հակասում դրա նպատակային օգտագործման բուն էությանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, այդուհանդերձ, հարկ է նկատել, որ տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովի որոշումը բովանդակային առումով վարչական ակտին բնորոշ ակտ է, քանի որ համապատասխան մասնակցի և պատվիրատուի միջև պայմանագիր կնքելու հարցն

ուղղակիորեն պայմանավորվում է այդ որոշմամբ: Հետևաբար համանման հարաբերություններ կարգավորող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքը («Վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:) օրենքի անալոգիայով կիրառելի է նաև գնահատող հանձնաժողովի գործունեության նկատմամբ: Ավելին, անգամ անկախ մեջբերված դրույթից և իրավահարաբերության տեսակից (վարչական կամ քաղաքացիա-իրավական), տվյալ կոնկրետ իրավահարաբերության յուրաքանչյուր մասնակից իր գործողություններում կաշկանդված է օրենքով կամ այլ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակով և իր իրավազորության տիրույթից դուրս որևէ գործողություն պետք է որակվի որպես հակահիրավական արարք: Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին: Հակառակ դեպքում ստացվում է, որ գնահատող հանձնաժողովը ենթարկվելով ճնշումների, անուղակի սպառնալիքների, կարող է շրջանցել օրենքները, ընդունել կամայական որոշումներ: Արդյունքում կարժեզրկվեն այդ հանձնաժողովի գործունեությունը կանոնակարգող իրավանորմերը՝ վերածվելով հոչակագրային դրույթների և, որպես հետևանք, կձևավորվի անկանխատեսելի իրավակիրառ պրակտիկա: Տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը գնահատումն իրականացրել է վերաբերելի օրենքների և այլ իրավական ակտերի շրջանակներում, ինչպես նաև մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան: Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքների վրա: Բացի այդ, Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք: Վերջինս երաշխավորում է

գնումների մասնակիցների հավասարությունը գնման գործընթացում՝ բացառելով այլ անձանց համար որևէ արտոնության կամ այլ նպաստավոր պայմանների սահմանումն ու կիրառումը, այդ թվում խտրականության դրսևորմանը: Սահմանադրության 59-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով: Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով: Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են: Ինչին և ուղղված է եղել Գնահատող հանձնաժողովի գործողությունները մրցակցային, համաչափ և ոչ խտրական հիմունքներով մրցույթների կազմակերպում: Ամփոփելով վերոգրյալը, ակներև է, որ Գնահատող հանձնաժողովը գնման գործընթացում ապահովել է պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման հնարավորությունը: Ցուցաբերել է միատեսակ իրավունքի կիրառում, բացառելով խտրական վերաբերմունքի առերևույթ դրսևորումներ՝ ապահովելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջները: Բացի այդ, Գնահատող հանձնաժողովը ապահովել է նաև օրենքի 3-րդ հոդվածով սահմանված մրցակցային, համաչափ և ոչ խտրական հիմունքներով մրցույթի կազմակերպման սկզբունքները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների, այդ թվում բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենադրությամբ:

Նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու գնումների հետ կապված բողոքներ քննող անձի. պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտն անվավեր ճանաչելով:

ՀՀ քաղ. օր-ի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքին կամ այլ իրավական ակտերին չհամապատասխանող և քաղաքացու կամ իրավաբանական անձի քաղաքացիական իրավունքները ու օրենքով պաշտպանվող շահերը խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտը դատարանով կարող է ճանաչվել անվավեր:

Հիմք ընդունելով վերոշարադրված փաստերը, գտնում ենք, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 12.07.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշումը իրավաչափ չէ, այն ընդունվել է օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով: Որոշում կայացնելիս չի իրականացվել գործի քննության բազմակողմանի լրիվ և օբյեկտիվ քննություն:

2. Սույն կետում ներկայացվում է «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ոչ գործընթաց նախաձեռնելու վերաբերյալ հիմնավորումները.

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է՝ «1. Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրա-ունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից»:

Հաշվի առնելով սույն դիրքորոշման 1-ին կետում նշված նախապատմությունը և վերլուծելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի նորմերը՝ գալիս ենք այն եզրահանգման, որ բացակայում է որևէ հիմնավորում «ՄԱԺԷՎ» ՍՊ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Այսպես, կասկածից վեր է, որ ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելու համար պետք է խախտած լինի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի նորմերը: Սակայն տվյալ պարագայում ընկերությունը նշված իրավական նորմի որևէ դրույթ չի խախտել, մասնավորապես.

Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով սնանկ ճանաչված չի եղել և ներկայումս էլ որևէ հիմք չկա Ընկերությանը սնանկ ճանաչելու համար.

Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չի ունեցել իրենց ներկայացրած առաջարկի մինչև մեկ

տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, Ընկերությունը կամ նրա գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում երբևէ դատապարտված չի եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար,

Ընկերության վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում և ընդհանրապես առկա չէ օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար,

Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չի եղել Եվրասիական տնտեսական անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չի եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ստացվում է, որ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ Ընկերությունը իրավունք ուներ մասնակցելու գնումների ընթացակարգին, իսկ ինչ վերաբերում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի կիրառմանը, ապա տվյալ պարագայում կրկին բացակայում է այս իրավական նորմի կիրառման իրավաչափությունը:

Այսպես, համաձայն վկայակոչված իրավանորմի՝ «Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից»:

Տվյալ պարագայում՝

Ընկերության հետ գնման մասին պայմանագիր չի կնքվել, հետևաբար պայմանագրով կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման մասին վկայակոչելն անհիմն է: Եթե դեռ չի կնքվել պատվիրատուի հետ պայմանագիրը, ապա ի՞նչ հիմքով այն կարող էր միակողմանի լուծվել պատվիրատուի նաևաձեռնությամբ:

Ընկերությունը չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին նրա հետագա մասնակցության դադարեցմանը: Սույն դիրքորոշմամբ ներկայացրել էինք, թե Ընկերությունը ինչպես է ճանաչվել գնման գործընթացի հաղթող և նրան հաղթող ճանաչելու որոշումը կայացրել է պատվիրատուն: Այսինքն, եթե պատվիրատուն գնման գործընթացի ժամանակ Ընկերության կողմից որևէ խախտում հայտնաբերեր, ապա բնականաբար նրան հաղթող ճանաչելու որոշում չէր կայացնի: Տվյալ պարագայում գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցությունը դադարեցվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի կողմից թիվ ԳԲՔԱ-ՆԳ- 2021/40 որոշմամբ, որի իրավաչափ կամ ոչ իրավաչափ լինելը հաստատվելու է միայն դատական կարգով՝ վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու դեպքում:

Ավելին, պետք է նշել, որ «Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը սահմանում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է՝ ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի հայտ ներկայացնելու պահից, մասնակցի իրավունքն է: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակում ստանձնում է որոշակի պարտականություններ, որոնք ծագում են որոշակի փուլից հետո: Մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելը՝ մասնակցի կողմից իրականացվող գործողություններն ուղղված են գնումների ընթացակարգին մասնակցության իրավունքի իրացմանը, որի շրջանակում մասնակիցը դեռևս որևէ պարտավորություն չի ստանձնում:

Ընկերությունն որպես ընտրված մասնակից չի հրաժարվել գնման գործընթացի հետագա մասնակցությունից,

Ընկերությունը հայտերը բացելուց հետո չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ամփոփելով վերոգրյալը, գտնում ենք, որ տվյալ պարագայում բացակայում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերությանը ընդգրկելու իրավական հիմնավորումները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով 03.08.2021թ.-ին նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021-/204 ծածկագրով ընթացակարգը մերժել»:

Ընկերությունը 11.08.2021թ. թիվ 021/1108 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով, որ 02.08.2021թ. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ԵԴ/32019/02/21 Քաղաքացիական գործի շրջանակներում կասեցվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առնչությամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի 12.07.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշման կատարումը, և արգելվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն՝ մինչև սույն գործով դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, ինչն ինքնըստինքյան ուղղակիորեն կապված է նաև ՍՑ-ՆԳ-202/206 ծածկագրով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգի հետ, միաժամանակ նկատի ունենալով, որ թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշման կապակցությամբ հնարավոր է Ձեր կողմից կաշկանդվածություն և կանխալ մոտեցում ներկայացնում ենք Ձեզ բացարկի միջնորդություն»:

Ընկերությունը 12.08.2021թ. թիվ 022/1208 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով, որ 02.08.2021թ. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ԵԴ/32019/02/21 Քաղաքացիական գործի շրջանակներում կասեցվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առնչությամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի 12.07.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշման կատարումը, և արգելվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն՝ մինչև սույն գործով

դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, ինչն ինքնըստինքյան ուղղակիորեն կապված է նաև ՍՑ-ՆԳ-202/206 ծածկագրով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգի հետ՝ խնդրում ենք հետաձգել 15 օրով վերոհիշյալ ընթացակարգով գործի քննումը՝ դատարան դրա կասեցման վերաբերյալ հայցադիմում ներկայացնելու նպատակով»:

Ընկերությունը 31.08.2021թ, թիվ 030/3108 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի լրումն 06.08.2021թ.-ին «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից Ձեր վարույթում առկա թիվ էՑ-LO-2021-/204 ծածկագրով՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հետ կապված ներկայացված դիրքորոշման՝ հայտնում ենք, որ դեռևս 19.08.2021թ.-ին ժամը 14:30 ին տեղի է ունեցել «ԳՀԱՊՁԲ-21-7/31-3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստ և նիստի արդյունքում ընդունվել է թիվ 10 արձանագրությունն այն մասին, որ «ԳՀԱՊՁԲ-21-7/31-3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է հայտարարվել՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն:

Նշված արձանագրությամբ միաժամանակ հաստատվել է «ԳՀԱՊՁԲ-21-7/31-3» ծածկագրով ընթացակարգի արդյունքում 3-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից՝ «Մաժէվ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

Ուստի 25.08.2021թ.-ին «ՄԱԺԷՎ» ՍՊ Ընկերության և և ՀՀ ՊՆ միջև կնքվել է «ԳՀԱՊՁԲ-21-7/31-3» ծածկագրով պայմանագիրը, որն ընկերության կողմից կատարվել է սույն թվականի օգոստոսի 30-ին:

Հաշվի առնելով, որ վերը նշված փաստերն ուղղակիորեն կապված են թիվ ՍՑ-ՆԳ 2021/206 ծածկագրով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի հետ, գտնում ենք, որ, ըստ էության առարկայազուրկ և անհիմն է դարձել տվյալ քննությունը շարունակելը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով 03.08.2021թ.-ին թիվ ՍՑ-ՆԳ-2021/206 ծածկագրով ընթացակարգը մերժել»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/206 ընթացակարգի շրջանակներում 12.08.2021թ. ժամը 09:30-ին և 06.09.2021թ. ժամը 09:21-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, տնօրենը ապահովել իր մասնակցությունը, ով մասնավորապես պնդել է գործի քննության ընթացքում գրություններով ներկայացված դիրքորոշումները:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.07.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/3734-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), հայտ է ներկայացրել «Մաժէվ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից):

Մասնակցի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ում՝ Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում 3-րդ չափաբաժինի գնման առարկայի տեխնիկական բնութագրով ներկայացվել է Ընթացակարգի հրավերով՝ նույն չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրից տարբերվող տեխնիկական բնութագիր, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 3-րդ չափաբաժնի անվանումը սյունյակում նշված է “Վառելիքի էլ. լցակայան”, այնինչ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով ընթացակարգի հրավերում նշված է “վառելիքի լիցքավորիչներ /Էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս/”

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հայտերի գնահատման նիստը և առաջարկել Մասնակցին ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում Մասնակիցը ներկայացրել է նոր Հավելված 1.1, որի համար պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացվել է մասնագիտական եզրակացություն

ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով և գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով մասնագիտական եզրակացությունը որոշեց «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ը և հայտը գնահատել բավարար և հրավերի պայմանների համապատասխան:

«Օլէդ» ՍՊԸ-ի կողմից 11.06.2021թ. ներկայացվել է բողոք վերոնշյալ ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, որի արդյունքում 14.07.2021թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշեց՝ մերժել «Մաժէվ» ՍՊԸ-ի ներկայցարած հայտը 3-րդ չափաբաժնի մասով, որը ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշմամբ բավարարվել է:

Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշումը՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.07.2021թ. որոշել է մերժել «Մաժէվ» ՍՊԸ-ի ներկայցարած հայտը 3-րդ չափաբաժնի մասով:

Կից ներկայացվում է Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/206 ընթացակարգի շրջանակներում 12.08.2021թ. ժամը 09:30-ին և 06.09.2021թ. ժամը 09:21-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/206 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/206 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար ներկանյութերի, ռետինափողրակների, վառելիքի լիզքավորիչների, քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. ««ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված

Հավելված 1.1-ում Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի անվանումը սյունակում նշված է «Վառելիք էլ. լցակայան», այնինչ՝ Ընթացակարգի հրավերում նշված է «Վառելիքի լիցքավորիչներ/ էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս», և որոշում է կայացվել Կարգի 41-րդ կետի համաձայն՝ 01.06.2021թ. կասեցնել նիստը և ծանուցել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին շտկման վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.06.2021թ. նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրվել է, որ ուսումնասիրելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը գնահատող հանձնաժողովը որոշեց «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից:

4. Սույն գործի փաստական հանգամանքների վերաբերյալ առկա է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի կողմից 11.06.2021թ. ներկայացված բողոքի քննության արդյունքում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 12.07.2021թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշում, համաձայն որի Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի իրարամերժ և հակասական գործողությունների արդյունքում, *այն է՝ Ընթացակարգի հրավերում գնման առարկայի անվանման մեջ առկա տեխնիկական վրիպակի հիմքով կատարելով փոփոխություն, այնուհետև բացառելով համարժեք ապրանքի ներկայացումը, կայացնելով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում՝ այն պայմաններում երբ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի Հավելված 1.1-ում Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի անվանումը սյունակում նշված ապրանքի անվանումը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքի անվանմանը, այն է՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն շտկման արդյունքում ներկայացված Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, որպես գնման առարկայի անվանում նշել է «Վառելիքի լիցքավորիչներ/ էլ. լցակայն ՍԵՎԵՐ 111-50 ՄՍ», մինչդեռ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով պահանջվել է «Վառելիքի լիցքավորիչներ /էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս/» ապրանքը*, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջների խախտում, և գտել է, որ պետք է դադարեցնել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.07.2021թ. նիստի թիվ 8 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Օլէդ» ՍՊԸ-ն 11.06.2021թ. ներկայացրել է բողոք՝ համաձայն որի վերջինս խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ վերացնել ընթացակարգի 3-րդ չափաբաժնի 10.06.2021թ. թիվ 6 արձանագրությամբ կայացրած որոշումը, պայմանագիր կնքելու որոշումը և ընտրված մասնակից ճանաչել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «Օլէդ» ՍՊԸ-ի բողոքը բավարարել է մասնակի՝ պարտավորեցնելով գնահատող հանձնաժողովին ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշումը դադարեցնելու որոշում ընդունել: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշումը՝

- դադարեցրեց ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշումը,
- ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով մերժեց «Մաժէվ» ՍՊԸ-ի հայտը:

Նույն արձանագրության համաձայն՝ 21.07.2021թ. գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել ներկայացված գնային առաջարկների և ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշման հիման վրա ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Օլէդ» ՍՊԸ-ին և ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

6. ՍՑ-ՆԳ-2021/206 ընթացակարգի քննության շրջանակներում «Մաժէվ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է տրամադրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 02.08.2021թ. թիվ ԵԴ/32019/02/21 հայցի ապահովում կիրառելու մասին որոշումը, համաձայն որի «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցի ապահովում կիրառելու մասին միջնորդությունը բավարարվել է և որոշվել է՝

- Կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 2021թ. հուլիսի 12-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/42 որոշման կատարումը մինչև տվյալ գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը,
- Արգելել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն՝ ուղղված առաջին կետով նշված որոշման կատարմանը:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.08.2021թ. նիստի թիվ 9 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան 09.08.2021թ. հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի, ՀՀ ՊՆ կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Օլէդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 12.07.2021թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշումները անվավեր ճանաչելու պահանջների մասին, որն ընդունվել է վարույթ: 02.08.2021թ. դատարանի թիվ ԵԴ/32019/02/21 որոշմամբ «Մաժէվ» ՍՊԸ-ի միջնորդությունը հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ բավարարվել է՝ կասեցվել է գնահատող հանձնաժողովի 21.07.2021թ. նիստի թիվ 8 արձանագրության 2.1 կետով կայացրած որոշման կատարումը և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 12.07.2021թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշման կատարումը, մինչև սույն գործով վերջնական դատակա ակտի օրիանական ուժի մեջ մտնելը:

Վերոգրյալից ելնելով գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով կասեցվել է»:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.08.2021թ. նիստի թիվ 9 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. «Հիմք ընդունելով ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետի՝ 16.08.2021թ. թիվ 1332 եզրակությունը դատարանի որոշման համաձայն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշումը չկատարելու վերաբերյալ, ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց սույն ընթացակարգի թիվ 7 արանագրության 3.1 կետով կայացված որոշումը՝ 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել՝ «Մաժէվ» ՍՊԸ-ին թողել անփոփոխ»:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել՝ «Մաժէվ» ՍՊԸ-ին և ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.08.2021թ. թիվ 26/26-1/12358-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 27.07.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/3734-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Մաժէվ» ՍՊԸ-ի գրությունները՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված</u>***

<u>պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:</u>

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ <u>մասնակիցը հայտով ներկայացնում է</u>՝ ապրանքների գնման դեպքում <u>իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը</u>***, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար ներկանյութերի, ռետինափողրակների, վառելիքի լիզքավորիչների, քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. ««ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի անվանումը սյունակում նշված է «Վառելիք էլ. լցակայան», այնինչ՝ Ընթացակարգի հրավերում նշված է «Վառելիքի լիցքավորիչներ/ էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս», և որոշում է կայացվել Կարգի 41-րդ կետի համաձայն՝ 01.06.2021թ. կասեցնել նիստը և ծանուցել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին շտկման վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.06.2021թ. նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրվել է, որ ուսումնասիրելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը գնահատող հանձնաժողովը որոշեց «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ սույն գործի փաստական հանգամանքների վերաբերյալ առկա է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի կողմից 11.06.2021թ. ներկայացված բողոքի քննության արդյունքում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 12.07.2021թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշում, համաձայն որի Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի իրարամերժ և հակասական գործողությունների արդյունքում, *այն է*՝

Ընթացակարգի հրավերում գնման առարկայի անվանման մեջ առկա տեխնիկական վրիպակի հիմքով կատարելով փոփոխություն, այնուհետև բացառելով համարժեք ապրանքի ներկայացումը, կայացնելով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում՝ այն պայմաններում երբ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի Հավելված 1.1-ում Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի անվանումը սյունակում նշված ապրանքի անվանումը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքի անվանմանը, այն է՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն շրկման արդյունքում ներկայացված Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, որպես գնման առարկայի անվանում նշել է «Վառելիքի լիցքավորիչներ/ էլ. լցակայն ՍԵՎԵՐ 111-50 ՄՍ», մինչդեռ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով պահանջվել է «Վառելիքի լիցքավորիչներ /էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս/» ապրանքը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջների խախտում, և գտել է, որ պետք է դադարեցնել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.07.2021թ. նիստի թիվ 8 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Օլէդ» ՍՊԸ-ն 11.06.2021թ. ներկայացրել է բողոք՝ համաձայն որի վերջինս խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ վերացնել ընթացակարգի 3-րդ չափաբաժնի 10.06.2021թ. թիվ 6 արձանագրությամբ կայացրած որոշումը, պայմանագիր կնքելու որոշումը և ընտրված մասնակից ճանաչել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «Օլէդ» ՍՊԸ-ի բողոքը բավարարել է մասնակի՝ պարտավորեցնելով գնահատող հանձնաժողովին ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշումը դադարեցնելու որոշում ընդունել: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշումը՝

- դադարեցրեց ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշումը,
- ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով մերժեց «Մաժէվ» ՍՊԸ-ի հայտը:

Նույն արձանագրության համաձայն՝ 21.07.2021թ. գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել ներկայացված գնային առաջարկների և ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշման հիման

վրա ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Օլէդ» ՍՊԸ-ին և ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ ***<u>Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:</u>***

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 26-րդ կետի համաձայն՝ ***Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:***

Նույն կարգի 27-րդ կետի համաձայն՝ ***<u>Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:</u>***

Վերոնշյալ իրավական կարգավորումների և փաստական հանգամանքների հիման վրա արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Այսպիսով՝ ամփոփելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ 12.07.2021թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 իրավապարտադիր որոշման կատարման արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.07.2021թ. նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով մերժել է «Մաժէվ» ՍՊԸ-ի հայտը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին «Մաժէվ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը, քանի որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ծանուցվելով անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սահմանված ժամկետում ներկայացրել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (հավելված N 1.1) շտկված տարբերակը, սակայն շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթում ևս՝ համաձայն 12.07.2021թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 իրավապարտադիր որոշման,

առկա է եղել անհամապատասխանություն Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջի նկատմամբ:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը*** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում***:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, գտնում եմ, որ «Մաժէվ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Անդրադառնալով «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից սույն գործի քննության ընթացքում դիրքորոշմամբ հայտնած այն պնդմանը, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 12.07.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշումը կայացնելիս չի գնահատել ՀՀ ՊՆ կողմից ներկայացրած ՀՀ ՊՆ պատասխանատու ստորաբաժանման (ՀՀ ԶՈՒ ԹՎ և Վ Ծառայություն) 08.06.2021թ. մասնագիտական եզրակացությունը, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

12.07.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշման շրջանակներում ՀՀ ՊՆ կողմից ներկայացրած ՀՀ ՊՆ պատասխանատու ստորաբաժանման (ՀՀ ՋՈՒ ԹՎ և Վ Ծառայություն) 08.06.2021թ. մասնագիտական եզրակացությանը անդրադարձ չի կատարել, այն հիմքով, որ Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ընդ որում իրավապարտադիր որոշմամբ արձանագրվել է, որ «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանել Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին:

Անդրադառնալով սույն ընթացակարգի քննության շրջանակներում «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից 11.08.2021թ. թիվ 021/1108 գրությամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բացարկի միջնորդությանը՝ ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ ներկայացված միջնորդությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ՍՑ-ՆԳ-2021/206 ընթացակարգի քննության նպատակով հրավիրված նիստի ընթացքում մերժվել է այն հիմքով, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով հստակ սահմանվում են Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ինքնաբացարկ հայտնելու հիմքերը, այն է՝ *Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը չի կարող քննել բողոքը, եթե պարզվում է, որ բողոքարկման գործընթացում ներգրավված է իր հիմնադրած կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպություն, կամ տվյալ բողոքարկման ընթացակարգում ներգրավված է իրեն մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձ (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի հիմնադրած կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպություն: Եթե առկա է սույն մասով նախատեսված պայմանը, ապա տվյալ բողոքի քննման և որոշման կայացման առնչությամբ սույն մասով սահմանված շահերի բախում ունեցող գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ինքնաբացարկ է հայտնում տվյալ բողոքի քննումից: Յուրաքանչյուր բողոքի քննման ժամանակ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ստորագրում է շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը բողոքի վերաբերյալ կայացված որոշման հետ մեկտեղ հրապարակվում է տեղեկագրում*, մինչդեռ վկայակոչված հոդվածով նախատեսված պայմանը առկա չէ սույն գործի քննման

շրջանակներում, ուստի բացակայում է նաև Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ինքնաբացարկի հայտնումը սույն գործի քննումից:

Անդրադառնալով «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից սույն գործի քննության ընթացքում ներկայացված Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 02.08.2021թ. թիվ ԵԴ/32019/02/21 քաղաքացիական գործի շրջանակներում կայացված հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշմանը, և վերջինիս կողմից հայտնած այն պնդմանը, որ համաձայն վերը նշված որոշման կասեցվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առնչությամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի 12.07.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշման կատարումը, և արգելվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն՝ մինչև սույն գործով դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, ինչն ինքնըստինքյան ուղղակիորեն կապված է նաև ՍՑ-ՆԳ-2021/206 ծածկագրով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգի հետ, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել հետևյալ փաստական հանգամանքը.

ՍՑ-ՆԳ-2021/206 ընթացակարգի քննության շրջանակներում «Մաժէվ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է տրամադրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 02.08.2021թ. թիվ ԵԴ/32019/02/21 հայցի ապահովում կիրառելու մասին որոշումը, համաձայն որի «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցի ապահովում կիրառելու մասին միջնորդությունը բավարարվել է և որոշվել է՝

- Կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 2021թ. հուլիսի 12-ի թիվ ***ԳԲՔԱ-ՆԳ-2021/42*** որոշման կատարումը մինչև տվյալ գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը,
- Արգելել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն՝ ուղղված առաջին կետով նշված որոշման կատարմանը:

Այսպիսով՝ համաձայն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 02.08.2021թ. թիվ ԵԴ/32019/02/21 հայցի ապահովում կիրառելու մասին որոշման կասեցվել է ԳԲՔԱ-ՆԳ-2021/42 իրավապարտադիր որոշման կատարումը, որը որևէ առնչություն չունի սույն գործի փաստական հանգամանքների հետ:

Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ ***<u>Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:</u>***

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 26-րդ կետի համաձայն՝ ***Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:***

Նույն կարգի 27-րդ կետի համաձայն՝ ***<u>Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:</u>***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ առկա չէ սույն գործի փաստական հանգամանքների վերաբերյալ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 իրավապարատադիր որոշման կասեցման կամ վերացման վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշում, որպիսի պայմաններում համաձայն վերը վկայակոչված իրավակարգավորումների Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 12.07.2021թ. ընդունված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 որոշումն ենթակա է անվերապահ կատարման:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից սույն գործի քննության ընթացքում ներկայացված ՀՀ պաշտպանության նախարարության և «Մաժէվ» ՍՊԸ-ի միջև «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով 25.08.2021թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-21-7/31-3» պայմանագրին, և վերջինիս կողմից հայտնած այն դիրքորոշմանը, որ հաշվի առնելով, այն որ վերը նշված փաստը ուղղակիորեն կապված է թիվ ՍՑ-ՆԳ-2021/206 ծածկագրով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի հետ, ուստի ըստ էության առարկայազուրկ և անհիմն է դարձել տվյալ քննությունը շարունակելն, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 12.07.2021թ. ընդունված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 իրավապարտադիր որոշման պայմաններում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Մաժէվ» ՍՊԸ-ի հետ 25.08.2021թ. կնքելով «ԳՀԱՊՁԲ-21-7/31-3» ծածկագրով պայմանագիրը, թույլ է տվել Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով, ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված «Գնումների

հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 26-րդ և 27-րդ կետերով սահմանված պահանջների խախտում, ուստի գտնում եմ, որ վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ կնքված պայմանագիրը չի կարող լինել իրավաչափ և ազդել սույն գործի ելքի վրա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.08.2021թ. թիվ 26/26-1/12358-2021 գրությամբ «Մաժէվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Մաժէվ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**